

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ,

(Սանկտ Պետերբուրգ, 2009 թվականի դեկտեմբերի 11)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում՝ Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

«Մաքսային միության ապրանքների արտաքին եւ փոխադարձ առևտրի վերաբերյալ մաքսային վիճակագրություն վարելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիրը կիրարկելու նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին՝

Հոդված 1

Սույն Արձանագրությունը սահմանում է այն հիմքերը, որոնցով Մաքսային միության ապրանքների արտաքին եւ փոխադարձ առևտրի մաքսային վիճակագրության տվյալները, (այսուհետ՝ արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալներ), փոխանցվում են Մաքսային միության հանձնաժողովի մաքսային վիճակագրության կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն)՝ այդ տվյալները Կենտրոն ներկայացնելու համար պատասխանատու լիազոր անձանց կողմից:

Հոդված 2

Կողմերի լիազոր ներկայացուցիչներն իրականացնում են Կենտրոն փոխանցվելիք՝ արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների նախապատրաստումն ու ձեւակերպումը՝ արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության միասնական մեթոդոլոգիային համապատասխան:

Կողմերի լիազոր մարմինների կողմից արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների փոխանցումը Կենտրոն իրականացվում է

արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների փոխանցման տեխնիկական պայմաններին (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ) համապատասխան:

Տեխնիկական պայմանները մշակվում եւ հաստատվում են Մաքսային միության հանձնաժողովի կողմից Կողմերի լիազոր մարմինների համաձայնությամբ: Տեխնիկական պայմանները պետք է ներառեն փոխանցվող տեղեկատվության եւ տվյալների հաղորդման միջոցների ձեւաչափերին ներկայացվող պահանջներ՝ սույն Արձանագրության 4-րդ հոդվածում ներկայացված արտաքին եւ փոխադարձ առևտրի ցանկին համապատասխան:

Կողմերի լիազոր մարմինները սույն Արձանագրության համաձայն տվյալների փոխանցումն իրականացնում են յուրաքանչյուր ամիս հաշվետու ժամանակաշրջանից հետո 40-րդ օրն էլեկտրոնային տարբերակով՝ թարմացնելով տվյալները օրացուցային տարվա սկզբից: Նախորդ տարվա տվյալների թարմացումն իրականացվում է այդ տարվա ավարտից հետո 180-րդ օրը: Օրացուցային ամիսն ընդունվում է որպես հաշվետու ժամանակաշրջան:

Հոդված 3

Տեխնիկական պայմաններին համապատասխան՝ Կողմերի լիազոր մարմինները ձեռնարկում են միջոցներ ապահովելու փոխանցվող տվյալների ամբողջականությունը, արժանահավատությունը եւ արդիականությունը:

Կողմերի լիազոր մարմիններն իրականացնում են նախատեսված ժամանակում թարմացված նորմատիվային-տեղեկատվական տեղեկատվության՝ Կենտրոն հասցնելու գործընթացը:

Հոդված 4

Կողմերի լիազոր մարմինների կողմից Կենտրոնին փոխանցվող վիճակագրական տվյալները պետք է պարունակեն հետեւյալ մանրամասները.

արտաքին առևտրի առումով.

ապրանքի ծածկագիրը համաձայն Մաքսային միության միասնական ԱՏԳ ԱՄԱ-ի (10 նիշ),

տեղափոխման ուղղությունը,
Ժամանակաշրջանը (ամիսը),
վիճակագրական արժեքը (ԱՄՆ դոլարով),
զուտ քաշը (կգ),
լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ համաձայն ՄՄ ԱՏԳ ԱՄԱ-ի,
ապրանքի քանակն ըստ լրացուցիչ չափման միավորի,
նշանակման երկիրը,
ծագման երկիրը,
ուղարկման երկիրը,
վաճառող երկիրը,
փոխադրամիջոցի տեսակը սահմանին,
փոխադարձ առետրի առումով.
ապրանքի ծածկագիրը համաձայն Միասնական ՄՄ ԱՏԳ ԱՄԱ-ի,
տեղափոխման ուղղությունը,
Ժամանակաշրջանը (ամիսը),
արժեքը (ԱՄՆ դոլարով եւ ազգային արժույթներով)
զուտ քաշը (կգ),
լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ համաձայն ՄՄ ԱՏԳ ԱՄԱ-ի,
ապրանքի քանակն ըստ լրացուցիչ չափման միավորի,
նշանակման երկիրը,
ծագման երկիրը,
ուղարկման երկիրը,
վաճառող երկիրը,

Հոդված 5

Կողմերի միջ եւ սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե Կողմերը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման այլ միջոցի վերաբերյալ Կողմերի միջ եւ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 6

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Արձանագրությունում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 7

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային հիմքի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն լեզվով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կուղարկի իր հաստատված օրինակը:

(Ստորագրություններ)